ջակցելու տրամադիր չէր, փութաց Ղուկասի համար բերաթ ձեռք բերել Բ. դռնից և կարգադրեց յիշատակել նրա անունը եկեղեցական պաշտամունքներում։ Ղուկաս կաթողիկոսն Աթոռի վրայ հաստատուելուն պէս 1780 թ. սովորական օրհնութեան կոնդակ առաքեց իւր հօտին, որի մէջ Սիմէոնի վախճանուիլը ծանուցանելով, յայտնում էր իւր նորան յաջորդ ընտրուելը։ Ռուսաստան ուղարկած իւր անդրանիկ կոնդակում նախ և առաջ մաղթում էր Աստուծու օրհնութիւնը «ռուսաց ազգի աստուածապահ ու բարեկեցիկ երկրի վերայ և Աստուծով կարգուած ու նրանով զօրացած, խաչապսակ բարեպաշտ օգոստափառ մեծ Ինքնակալ Եկատերինէ Կայսրուհու և նրա տիրախնամ Ժառանգ Որդու Աստուծով զօրացած Մեծ Իշխան Պաւէլ Պետրովիչի և բարեփառ Մեծ իշխանուհու Մարիա Ֆեոդորովնայի և նրա տիրաձիր մատաղ որդոց՝ Ալէքսանդր և Կոնստանդին Պաւլովիչների վրայ»։ Ապա թէ Սիմէոն կաթողիկոսի մահուան հանգամանքներն և իւր կաթողիկոս ընտրուիլն և օծուիլը հաղորդելով, մաղթում էր Աստծոյ օրհնութիւնը համայն հօտի և սուրբ Աթոռի հաւատարիմ որդու՝ Յովսէփ Արղութեան արքեպիսկոպոսի վրայ, և վերահաստատելով նրան պաշտօնի մէջ որպէս զի նա 'ի կատար ածէ իւր սկսած աստուածահաճոյ գործերը, պատուիրում է առաջուայ պէս որդիական սիրով հնազանդուել իրեն և աջակցել ամեն բանում։

Ինչպէս վերն ասացինք, Սրբազնագոյն Ղուկաս կաթողիկոսը շատ նախանձախնդիր էր Մայր Աթոռի գերագոյն իրաւունքների պահպանութեան։ Իւր նախորդի նման՝ նա էլ զգուշանում էր Գանձասարի Իսրայէլ կաթողիկոսի գաւերից և հրամայում, որ դա չփորձէ ընդարձակել իւր իշխանութիւնը ռուսահպատակ Հայոց վրայ։ Այս նպատակով Ղուկաս կաթողիկոսը հետևում էր 1768 թ. Բարձրագոյն հրամանի գործադրութեան, այսինքն որ ոչ մի հայադաւան եկեղեցական իրաւունք չունենայ առանց Էջմիածնական հայրապետի գրաւոր թոյլտուութեան մուտք գործել Ռուսաստան. և դարձեալ Սիմէոն կաթողիկոսի նման ստէպ ստէպ օրհնութեան թղթեր և աղերսական կոնդակներ էր գրում սահմանամերձ քաղաքների հրամանատարներին, որ ստորադրեալ պաշտօնեաները խստիւ ջանան վերոյիշեալ Բարձրագոյն հրամանի սահմանած պահանջը կատարել։

Կայսերական կառավարութիւնը ռուսաց պետութեան սահմանների մէջ Հայաստանեայց եկեղեցուն և Մայր Աթոռին

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան